

after hanging by

087.1
p-ss

3 APR 2015

23 JUN 2008



606
37

ԻՆԵ ՉԱՐՅՈՒՐ ՆԻԼՈԳ



087. 1
h-55

ԹԵՏԶՐԱՏ 1933 ՅԵՐԵՎԱՆ

Ամբողջ յերկրում հրդեհվում էին կալվածատերերի շենքերը: Քաղաքներում փողոցները բաժանված էին բարիկադներով: Բանվորները կռվում էին ցարական զինվորների դեմ: Գյուղացիները գնում էին կալվածատերերից զբաղվու հաց և հող:

Յերբ և յեղեւ այս բոլորը. — քսան և յոթ տարի առաջ, 1905 թվին:

Այժմ մեր յերկիրը կոչվում է ԽՍՀՄ: Քսանևյոթ տարի առաջ կոչվում էր «Ռուսաստանի կայսրություն»: Ռուսաստանի կայսրությունը ղեկավարում էին թագավորը և մինիստրները: Գործարանները պատկանում էին կապիտալիստներին, հողը՝ կալվածատերերին: Բանվորները և գյուղացիները պաշարում էին թագավորի ու մինիստրների, գործարանատերերի և կալվածատերերի դեմ:

1904 թ. Ռուսաստանը պատերազմում է Յապոնիայի հետ: Այդ պատերազմը միայն թագավորին և կալվածատերերին եր պետք: Պատերազմի սկզբին կայսերական զենքալիները պարծենում էին, վոր մեկ ամսում իրենք կհաղթեն յապոնացիներին: Բայց Ռուսաստանը պարտվում էր: Չորքը գնդերով անցնում եր գերի: Ռուսական նավերը սուզվում էին նրանց գցած ականներից և խորտակվում: Զինվորները ֆրոնտում մահանում էին գնդակից և դիզենտերիայից. թիկունքում՝ բանվորների ու չքավոր գյուղացիների մեջ սով եր:

Գյուղացիները 100 միլիոն էին: Կալվածատերերը 50 հազար: Իսկ բոլոր գյուղացիները միասին ախքան հող ունեյին, ինչքան կալվածատերերը: Փարբիկաներում և գործարաններում բանվորական որը շարունակվում եր 12 ժամ ու տեղ-տեղ ել ավելի, ապրուստը թանգանում եր, իսկ աշխատավարձը չեր բավականանում:

1905 թվի հունվարի 9-ին յերկու հազար բանվոր գնացին թագավորի մոտ՝ վողորմություն խնդրելու նրանից: Այդ ժամանակ բանվորների մեջ բուլլեիկներ քիչ կային: Բանվորները մտածում էին, վոր թագավորն իրենց կոգնե գործանատերերից և կտա 8-ժամյա բանվորական որ: Թագավորը հրամայեց կրակել բանվորների վրա:

Գյուղացիներն ապստամբեցին: Սև ծովի վրա ապստամբեցին նաև զրահանավերը: Գնացքները կանգնեցին: Փակվեցին դպրոցները: Փոստատարը նամակները չբաժանեց, Դեղատները դադարեցին աշխատելուց:

Բանվորներն ընտրեցին Խորհուրդ: Պետրբուրգում յեղավ յերկու իշխանություն. — Կայսերական մինիստրների և բանվորական Պատգամավորների Խորհուրդի: Հետո վոստիկանությունը ձերբակալեց Խորհուրդը և բանվոր պատգամավորներին բանտ նստեցրեց: Այն ժամանակ Մոսկվայում և մյուս քաղաքներում բանվորներն ապստամբեցին: Ցարական զինվորները գնդացիներով և թնդանոթներով կրակում էին նրանց վրա: Վոստիկանները գնդացիներով շրջում էին ամբողջ յերկիրը: Նրանք գնդակահարում և կախաղան էին բարձրացնում բանվորներին ու գյուղացիներին:


Այս գրքում յոթ նկար կա: Ինչ յեղավ 1905 թվին, բոլորը նկարված չե, սրանք միայն ամենազրկավորներն են:



Լրտեսները հետևում էին բանվոր-հեղափոխականներին: Վոստիկանները դիզերները կառավարում էին տներին: Գավթապահները նրանց տանում էին բանվորների տները: Վոստիկանները խուզարկում էին բնակարանները, բրբրում մասրասները, պչխում վառարանի պատի ծխահանները: Յեթե նրանք գտնեյին հեղափոխական կոշեր, բանվորներին կախաղան էին Սիրեր:



Ճերեկվա ժամը լերիկուն եր: Դժարացում ահապարակում խմբերով կանգնել եյին բանվոր-
ները, նրանք սպասում եյին թագավորին: Պալատի առաջ զինվորներ եյին: Ալեքսանդրյան
աղու ծառերի վրա բարձրացել եյին մանուկները, նրանք նայում եյին, թե ինչ է լինելու:
Թագավորը դուրս չեկավ:



Սպաները ուսել եյին թրերը: Զինվորները կանգնել եյին շարքերով:
Մի զինվոր փողը մոտեցրեց շրթերին: Հետո միանգամից կրակեցին հրացանները: Կարծես պատու-
վեց ողը: Բանվորները սկսեցին փախչել, հավաքելով սպանվածներին ու վիրավորներին: Մանուկ-
ները ծառերից ընկան ցածկապատի ու մայթերի վրա: Իսկ հետո կողակները լերդեցին — «Աստված,
պահիր թագավորին»:



Առաջին անգամ աշխարհում Բանվոր Պատգամավորների Խորհուրդն ընտրվեց Պետերբուրգում 1905 թ. Հոկտեմբերին։ Նա ղեկավարում էր լիբերի վողջ գործադուլը։ Նրան հպատակվում էին բոլոր գործարանները, փոստ-հեռագրատները և լիբլաթուղիները։ Նույնիսկ մինիստրներն առանց Խորհրդի թույլտվության չէին կարող քաղաքից դուրս գալ։



«Պատվովին» զրահանավի նավաստիները նրաժաղվեցին վոլգյան միս ուտելուց։ Հրամանատարները կարգադրեցին։ Կնդակհարել լիբսուռն նավաստու։

«Տղերք, բավական է համբերել», դուռաց մի նավաստի, և բոլորը միասին հարձակվեցին սպանների վրա։ Սպաններն սկսեցին ընկնել ջուրը։ Նավաստիներն ընտրեցին կոմիտե և զրահանավի վրա բարձրացրին կարմիր դրոշակ։

Կապույտ ծովերի ծանր ջրերի և քաղաքների բարեկազմների ու հրդեհավոյ դաշտերի վրա հնչեց պրոլետարների լիբլաթի լիբլը։

— Յիլիբ, ում կյանքն անիծվել է...



Գյուղացիները գեղերն են աշտում ելին խոտերի բուլուլները. դա ազդանշան էր հարևան գյուղերին: Գերաններով ու յեղաններով զինված, նրանք գնում էին զրավելու կալվածատերի-
 ընդ հաց և հող: Իսկ քաղաքներից գնում էին թագավորական զորքերն ապստամբ չքավոր գյու-
 ղացիներին խաղաղացնելու: Նրանք գնդակահարում և հրդեհում էին վողջ գյուղերը: Զինվորնե-
 րին հրաման էր արված՝ «ձերբակալել քիչ, գնդակահարել շատ»:



Հիսունյերիւ ուր գոյութուն ունեցաւ բանվոր պատգամավորների առաջին խորհուրդը:
 Հիսունյերիքյորդ ուր իգմալեյան գնդի շինվորները, կազակները և վոստիկանները շրջապա-
 տեցին այն շենքը. վորտեղ խորհուրդն էր:

Վոստիկանները մտան դահլիճ, բայց չհամարձակվեցին ձերբակալել բանվոր պատգամավոր-
 ներին, մինչև խորհրդի նիստի վերջանալը:



ԱՌԵ

Բանվորների և գյուղացիների ապստամբությունը ճնշվեց: Սորհուրդը ցրվեց: Պարտվեց հեղափոխությունը:

Ինչու հաղթեց ցարական պետությունը. վորովհետև բանվորներն ու գյուղացիները սերտորեն միացած չեղին: Գյուղացիները կազմակերպված չեղին: Իսկ զորքը կռվում էր բանվորների և չքավոր գյուղացիների դեմ: Ապստամբությունը բռնկվում էր մի որ մի քաղաքում, հետո մի ուրիշ և ցարական պետությունը հերթով ճնշում էր գործում:

1905 թվի բանվորներին և գյուղացիներին փորձ ցույց տվեց: Նրանք դադարեցին հաժապալ թագավորին խնդրելուց և հասկացան, վոր լեթե կազմակերպված ձևով պայքարեն, կարելի չէ տապալել ցարական պետությունը:

1917 թվին գյուղացիներն ու զինվորները պայքարեցին Բանվորների հետ: Սորհուրդի մեջ ընտրվեցին բանվորներ, գյուղացիներ և զինվորներ:

Սորհուրդները, բալշևիկների ղեկավարությամբ, տապալեցին կապիտալիստներին և իշխանությունը վերցրին իրենց ձեռքը:

1917 թվին բանվորներն ու գյուղացիները ձեռք բերին աշխարհում առաջին անգամ պայքարեցին 1905 թվին:

Պատ. 31 Տիրած 3000, Գլավ. 8003 (բ) Հրատ. 3425

Մոսկվայում ապստամբեցին բանվորները, փողոցներում կառուցեցին բարիկադներ: Կարեցին հեռադրաստանները, լեռկաբեզ զարանցին փողոցների լախուծյամբ, մեջտեղը 1917 թվին ապստամբությունը Պետերբուրգից և Վարշավայից զորք տարավ ու ճնշեց ապստամբությունը: Սպանվեցին 1000 մարդ, վորից 86 յերեխա:

16283